State of California — Health and Human Services

Department of Health Care Services

P.O. Box 989009, West Sacramento, CA 95798-9850

JOHN SAMPLE
1234 SAMPLE STREET
ADDRESS 2
ANYTOWN CA 90000

XX/XX/XXXX

Կարևոր տեղեկություն

Հետևյալ օրվանից փոխվում է այն ձևը, որով Դուք ստանում եք «Medi-Cal»-ի Ձեր նպաստները. [MM/DD/YYYY]

Որպեսզի Դուք ստանաք «Medi-Cal»-ի Ձեր ծառայությունները, Դուք պետք է անդամագրվեք «Medi-Cal» կառավարվող բուժսպասարկման որևէ ծրագրի: Այս փոփոխության նպատակը «Medi-Cal»-ի Ձեր ծառայություններն ի մի հավաքելն է:

Սա երկրորդ նամակն է «Medi-Cal»-ի ծրագիր ընտրելիս Ձեր տրամադրության տակ եղած տարբերակների մասին:

Նախկինում Ձեր ստացած ծառայությունների և Ձեր առողջապահական կարիքների հիման վրա՝ Դուք ընդգրկվել եք «Medi-Cal»-ի ստորև նշված ծրագրում: **Եթե Դուք «Medi-Cal»-ի որևէ այլ ծրագիր չընտրեք, ստորև նշված օրը Դուք կընդգրկվեք հետևյալ առողջապահական ծրագրում.**

MM/DD/YYYY: NAME OF PLAN

Եթե Դուք «Medicare» ունեք, ապա այս փոփոխությունը չի ազդում «Medicare»-ի Ձեր ապահովագրության կամ «Medicare»-ի Ձեր բժշկին այցելելու կարողության վրա:

Այս փոփոխությունն ինչպե՞ս կազդի ինձ վրա:

- «Medi-Cal»-ի Ձեր ծրագիրը կհամակարգի «Medi-Cal»-ի կողմից վճարվող Ձեր ստացած բոլոր ծառայությունները:
- «Medicare»-ի Ձեր ծառայությունները և սպասարկողները ՉԵՆ փոխվի:
- «Medi-Cal»-ի Ձեր ծառայությունները և սպասարկողները ՉԵՆ փոխվի:
- «Medi-Cal»-ի Ձեր իրավասությունը որևէ փոփոխությունն ՉԻ կրում և լրացուցիչ ծախս չի պահանջում Ձեզանից:

Դիմեք Ձեր առողջապահական ծրագրին և պարզեք, թե արդյոք Ձեր սպասարկողներն աշխատակցում են «Medi-Cal»-ի Ձեր ընտրած ծրագրին:

Ի՞նչ ծառայություններ եք Դուք ստանալու «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագրից:

«Medi-Cal»-ի Ձեր ծրագիրը կհամակարգի «Medi-Cal»-ի կողմից վճարվող Ձեր բոլոր ծառայությունները, այդ թվում՝ «Long Term Services and Support»-ը:

- Եթե Դուք «Medicare»-ում եք, ապա «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագիրը չի վճարի «Medicare»-ի որոշ ծախսերի բաժնի և այլ նպաստների համար, որոնք վճարվում են «Medicare»-ի կողմից, օրինակ՝ որոշ տեսակի փոխադրման, բժշկական պիտույքների և որոշակի դեղատոմսային դեղերի համար:

Ի՞նչ են «Medi-Cal»-ի «Long Term Services and Supports»-ները:

- **«In-Home Supportive Services»-ները (IHSS)** անձնական խնամքի ծառայություններ են այն անձանց համար, ում օգնություն է հարկավոր սեփական տանն ապահով ապրելու համար: Եթե այժմ Դուք IHSS եք ստանում, Դուք ստիպված չեք փոխել IHSS-ի Ձեր սպասարկողներին և կարող եք առաջվա նման վարձել, հեռացնել ու կառավարել Ձեր սպասարկողներին:
- **«Community-Based Adult Services»-ը (CBAS)** որոշ քրոնիկական հիվանդություններ ունեցող անձանց խնամք, բուժում, ժամանց և սնունդ տրամադրող կենտրոններում գործող ցերեկային ծառայություններ են:
- **«Multipurpose Senior Services Program»-ը (MSSP)** սոցիալական և բուժսպասարկումը համակարգող ծառայություններ է տրամադրում՝ 65 տարեկան կամ ավելի մեծ անձանց համար: Եթե Դուք ներկայումս MSSP եք ստանում, ապա Ձեր առողջապահական ծրագիրը կհամագործակցի Ձեր MSSP-ի սպասարկողի հետ՝ Ձեր խնամքն ավելի լավ կազմակերպելու համար: MSSP-ի Ձեր սպասարկողին փոխելու կարիք չկա:
- **Ծերանոցային խնամք:** Եթե Դուք ծերանոցում եք գտնվում, ապա Ձեր առողջապահական ծրագիրը կհամագործակցի Ձեր բժշկի և ծերանոցի հետ՝ Ձեր խնամքն ավելի լավ կազմակերպելու համար: Եթե այժմ Դուք ծերանոցում եք գտնվում, Դուք ստիպված չեք փոխել Ձեր ծերանոցը:

Եթե այժմ Դուք այդ ծառայությունները չեք ստանում, «Medi-Cal»-ի Ձեր ծրագիրը կարող է հետագայում օգնել Ձեզ դրանք ստանալու հարցում, եթե Դուք դրանց կարիքն ունենաք:

Ես ե՞րբ կընդգրկվեմ «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրում:

Հետևյալ օրվանից Դուք կընդգրկվեք «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրում. MM/DD/YYYY:

Ես կարո՞ղ եմ «Medi-Cal»-ի մեկ այլ առողջապահական ծրագիր ընտրել:

Այո: Դուք շուտով փոստով փաթեթ կստանաք, որը տեղեկություններ կպարունակի առողջապահական ծրագրերի մասին: Կարդացեք այդ փաթեթում պարունակվող նյութերը: Այդ փաթեթում Դուք կգտնեք՝

- «Ընտրության գրքույկ», որը ցուցումներ է պարունակում այն մասին, թե ինչպես «Medi-Cal» կառավարվող բուժսպասարկման առողջապահական ծրագիր ընտրել Ձեր շրջանում և անդամագրվել դրան.
- սպասարկողների ցուցակներ, որոնցում նշված են յուրաքանչյուր ծրագրի հետ աշխատող բժիշկները:

Այժմ ես ի՞նչ պետք է անեմ:

- Այս նամակի և տեղեկությունների մասին պատմեք Ձեր ընտանիքի անդամներին կամ որևէ մեկին, որը քաջատեղյակ է, թե առողջապահական բնույթի ինչ կարիքներ ունեք Դուք:
- Խոսեք Ձեր բժիշկների և այլ սպասարկողների հետ և պարզեք, թե որ ծրագրերի հետ են աշխատում:
- Եթե Դուք «Medicare» ունեք, խնդրում ենք զանգահարել **«California Health Insurance Counseling & Advocacy Program» (HICAP)՝ 1-800-434-0222 (TTY: 711)** հեռախոսահամարով:
- Մեկ այլ առողջապահական ծրագիր ընտրելու համար զանգահարեք «Health Care Options»՝ երկուշաբթի-ուրբաթ օրերին՝ ժամը 8-ից 17-ը՝ 1-844-580-7272 կամ TTY՝ 1-800-430-7077 հեռախոսահամարով՝ մինչև MM/DD/YYYY:

Օգնության կամ լրացուցիչ տեղեկությունների համար

Եթե հարցեր ունեք «Medicare»-ի վերաբերյալ, խնդրում ենք զանգահարել 1-800-MEDICARE (1-800-633-4227)՝ օրը 24 ժամ՝ շաբաթը 7 օր: TTY-ից օգտվողները պետք է զանգահարեն 1-877-486-2048:

Եթե ցանկանում եք «Medi-Cal»-ի մեկ այլ ծրագիր ընտրել և/կամ այս նամակը ստանալ մեկ այլ լեզվով կամ այլընտրանքային ձևաչափով, օրինակ՝ խոշորատառ, ձայնագրված կամ Braille-ի գրատիպով, խնդրում ենք զանգահարել «Health Care Options»՝ երկուշաբթի-ուրբաթ օրերին՝ ժամը 8-ից 17-ը՝ 1-844-580-7272 կամ TTY՝ 1-800-430-7077, հեռախոսահամարով: